ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4586-Ա « 17 » սեպտեմբերի 2026թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 23-Ի Հ.2455-Ա
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հաշվի առնելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 29.08.2022թ. հ.29082022-01-0097 վկայականը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 11.09.2026թ. հ.20-Էլ-86108 եզրակացությունը, ինչպես նաև քաղաքացի Լևոն Սումբատյանի՝ ի դեմս ներկայացուցչի 13.08.2026թ. հ.Դ-86108-26 դիմումը.

1. Երևանի քաղաքապետի 2025թ. հունիսի 23-ի «Երևան, Կենտրոն, Անտառային փողոց հ.11/5 հասցեի բնակելի տանը կից հողամասի նկատմամբ Լևոն Արազի Սումբատյանի իրավունքները վերականգնելու, 98.65քմ մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» հ.2455-Ա որոշման 1-ին կետում՝ «օրինական 414.03քմ մակերեսով հողամասին» բառերը փոխարինել «օրինական 186.13քմ և 22.79քմ մակերեսներով հողամասերին» բառերով:

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

3. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավարի վրա:

4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին, կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ